DOI: 10.54503/978-9939-9312-5-8-140

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԳԱԲՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ներածություն: Վերջին շրջանում ՀՀ տնտեսավարող սուբյեկտները, օգտվելով ապրանքային շուկաներում ունեցած գերիշխող դիրքից (առանձին կամ համատեղ), սպառողներին «հարկադրում» են իրենց ապրանքը (ծառայությունը) ձեռք բերել առաջարկի գնով: Մասնավորապես, հեղուկ գազը վաճառվել է 60-80 %-ով բարձր գնով, քան այդ ապրանքի գնի կտրուկ բարձրացումն էր: Սակայն պետական պատասխանատու մարմինը՝ ՀՀ մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով) մրցակցային օրենսդրության խախտումներ չի արձանագրել[1]: Հանձնաժողովի հիմնավորումն այն է, որ «հեղուկ գազի ապրանքային շուկայում գործում են 170 տնտեսավարող սուբյեկտներ, և դրանցից ընդամենը 9 սուբյեկտ է, որ ունի 3 տոկոսից ավել բաժին»[2]: Որքա՞ն է այդ պնդումը հիմնավոր, կքննարկենք հետագա շարադրանքում:

Հանձնաժողովի գործունեության մեջ ապրանքային շուկաների վերլուծությանն առնչվող մասնագիտական սխալներ և անճշտություններ նկատվել են նաև նախորդ ուսումնասիրություններում և տարեկան գործունեության հաշվետվություններում:

Հետազոտության նպատակն է վեր հանել ապրանքային շուկաների վերլուծության ընթացքում ի հայտ եկած հաճախակի կրկնվող մասնագիտական սխալներն ու անճշտությունները և ներկայացնել դրանց հիմնական պատճառները:

Առաջադրված նպատակից ելնելով՝ խնդիր է դրվել ուսումնասիրել Հանձնաժողովի տարեկան գործունեության հաշվետվությունները, ոլորտային ուսումնասիրությունները և առանձին ապրանքային շուկաների վերաբերյալ այդ պետական մարմնի հարուցած վարույթները:

---

[1] ՄՄՊՀ-ի 2025թ. հուլիսի 31-ի հայտարարությունը (ոլորտային ուսումնասիրություններ) https://competition.am/hy/2025/07/31/%d5%b0%d5%a5%d5%b2%d5%b8%d6%82%d5%af-%d5%a3%d5%a1%d5%a6%d5%ab-%d5%b7%d5%b8%d6%82%d5%af%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4-%d5%b9%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a3%d5%a5%d6%80%d5%ab%d5%b7%d5%ad%d5%b8%d5%b2-%d5%a4/ (վերջին մուտքը՝ 02.12.2025):

[2] Նույն տեղում:

Գրականության ակնարկ: Տնտեսական մրցակցության վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ կան: Դրանց զգալի մասն առնչվում է ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ այդ շուկաների սահմանների, ուսումնասիրության ժամանակահատվածի և դրանցից ածանցվող գնահատականներին ու պատժամիջոցներին:

Մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների վերաբերյալ տնտեսագիտական վերլուծություն են տայտարարել այդ բնագավառի ՌԴ-ի հայտնի մասնագետներից երկուսը (Ս.Ավդաշև և Ա.Շաստիտկո, 2010) : Հեղինակներն անդրադարձել են հակամենաշնորհային օրենսդրության խախտման համար քրեական պատժամիջոցներին: Նրանց կարծիքով, մրցակցության սահմանափակման համար 2009 թվականի հոկտեմբերի 30-ին ուժի մեջ մտած ՌԴ քրեական օրենսդրության փոփոխությունը (հոդված 178) զգալիորեն բարձրացրեց տուգանքների մեծությունը և պատասխանատու անձանց ազատությունից զրկելու միջոցով քրեական պատասխանատվության ենթարկելու պատիժ նախատեսեց[3]:

Հեղինակների կարծիքով, պատժամիջոցների նոր համակարգը կարող է էապես ազդել տնտեսական գործակալների, դատարանների և իշխանության պետական մարմինների, այնպիսի գործողությունների վրա, որոնց պատճառով մրցակցությունը կթուլանա: ՌԴ-ի ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակը բարձր է, ուստի մրցակցությունը թույլ է: Դրա հետ միասին իշխանության պետական և տեղական ինքնավարության մարմինների որոշակի որոշումներ նպաստում են մրցակցության թուլացմանը[4]:

Նույն հեղինակները, հիմք ընդունելով ՌԴ ԴՀԾ-ի 2006 և 2010 թվականներին ընդունած «Ապրանքային շուկաներում մրցակցության վիճակի վերլուծություն կատարելու կարգը», ուսումնասիրել են հակամենաշնորհային օրենսդրության խախտման մի շարք գործեր (Ս.Ավդաշև և Ա.Շաստիտկո, 2011) :

Դրանցից 15-ը վերաբերել է 2006 թվականի կարգով կատարված՝ գերիշխող դիրքի չարաշահումներին առնչվող գործերին:

Ըստ հեղինակների, շատ դեպքերում անօրինական գործունեության մեղադրանքը կարող է հերքվել միայն ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանների վերասահմանմամբ: Մնացած բոլոր այլ հավասար պայմաններում, որքան այս սահմանները լայնորեն են որոշված, այնքան քիչ է առանձին վաճառողի շուկայական մասնաբաժինը և, հետևաբար, նրա գերիշխող դիրք զբաղեցնելու հավանականությունը (անհատապես կամ համատեղ) փոքր է[5]:

---

[3] Авдашева С., Шаститко А., Экономика уголовных санкций за нарушение антимонопольного законодательства, Вопросы экономики, № 1 , 2010 с.129

[4] Նույն տեղում, էջ 132:

[5] Авдашева С., Шаститко А., Экономический анализ в делах о нарушении закона «О защите конкуренции», Вопросы экономики, № 2 , 2011 с. 124.

Հեղինակներից մեկը նշում է, որ երկար ժամանակ ռուսական հակամենաշնորհային գործառույթներում գործնականում անտեսվել է «համադրելի շուկայի» կիրառման անհրաժեշտությունը: Սակայն 2005-ից մինչև 2009 թվականը ՌԴ-ում արմատապես փոխվել է հակամենաշնորհային օրենսդրությունը: Ներառվել են «համատեղ գերիշխում» (Հայաստանում այն ներառվել է 2007 թվականին՝ Մ.Մ. և Գ.Մ.), «պետական նախապատվություն», «տնտեսական գործունեության համակարգում» եզրույթները, հստակեցվել են «համաձայնություններ» և «համաձայնեցված գործողություններ» եզրույթները և այլն: Բացի այդ խստացվել են մրցակցության կանոնների խախտման համար պատժամիջոցները (նախ և առաջ՝ գերիշխող դիրքի և համաձայնությունների ու համաձայնեցված գործողությունների հետ կապված): Ընդ որում, մենաշնորհ բարձր (ցածր) գնի համար սահմանվել է երկու չափանիշ՝ ապրանքի գնի անհամապատասխանությունը տնտեսապես հիմնավորված ծախսերին ու շահույթին և համադրելի մրցակցային շուկայում ձևավորված ապրանքի գնին[6]:

Այժմանովը մրցակցության զարգացման ու պաշտպանության համար կարևորել է փորձագետների ինստիտուտի դերը: Մասնավորապես, ըստ հեղինակի, դատական գործընթացներում փորձագետները կարող են նպաստել պետական կարգավորող մարմինների կայացրած ոչ համարժեք պատժամիջոց սահմանող որոշումները չեղարկելուն[7]:

Հեղինակի ներկայացմամբ Ղազախստանի Հանրապետության Մրցակցային քաղաքականության զարգացման և պաշտպանության կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն) կողմից ապրանքային շուկաների վերլուծությունները և փորձագիտական կարծիքները կարևոր հիմք են դառնում հակամենաշնորհային մարմնի հետ վեճերի հաջող լուծման համար:

Օրինակ՝ Կենտրոնը ապացուցել է, որ պետական մարմինը սխալ է որոշել ապրանքային շուկայի սահմանները և Կենտրոնի վերլուծության և եզրակացության հիման վրա Հաշտեցման հանձնաժողովը որոշել է դադարեցնել ածխի վաճառքի շուկայում գործող ընկերության նկատմամբ հետաքննությունը: Դատարանը չեղյալ է հայտարարել հանքարդյունաբերության ոլորտում գործող շուկայական երկու սուբյեկտների նկատմամբ հետաքննություն սկսելու որոշումը, որոնց հակամենաշնորհային մարմնի տարածքային ստորաբաժանումը սխալմամբ դասակարգել էր որպես քրոմի հանքաքարի վաճառքի շուկայական սուբյեկտ: Կենտրոնի եզրակացության հիման վրա դատարանը ապացուցել է, որ երկաթուղային արդյունաբերության ոլորտում շուկայական սուբյեկտի գործողությունները չեն խախտել հակամենաշնորհային օրենսդրությունը գերիշխող դիրքի չարաշահման առումով: Նշանակված միլիարդ ռուբլու

---

[6] Шаститко А., «Сопоставимые рынки» как инструмент антимонопольной политики, Вопросы экономики, № 5 , 2010, с. 97.

[7] Айтжанов А., Развитие и защита конкуренции возможны только при активном участии экспертов, Конкуренция и антимонопольное регулирование в евразийском экономическом союзе, № 1 , 2021, с. 32-37.

տուգանքը չեղյալ է հայտարարվել [8]: Ըստ Այտժանովի, նմանատիպ օրինակներ շատ կան, և կարևոր է, ոչ միայն շուկայի մասնակիցներին իրական օգնություն է ցուցաբերվում, այլև այն , որ Կենտրոնի շնորհիվ կատարելագործվում է իրավապահ մարմինների գործելակերպը, իսկ հակամենաշնորհային կարգավորման համակարգը Ղազախստանում կամ ԵԱՏՄ-ում դառնում է ավելի արդյունավետ ու արդար[9]:

Տնտեսության մեջ թվային փոխակերպումները զգալիորեն փոխել են ավանդական շուկաների բազմաթիվ մասնակիցների բիզնես մոդելները[10]: Հայտնվել են նոր մասնակիցներ և նոր շուկաներ՝ հարթակներ և բազմակողմանի շուկաներ, որոնց ի հայտ գալը և գործունեությունը սերտորեն կապված են ցանցային արտաքին ազդեցությունների հետ: Հեղինակները հարցադրում են կատարում՝ արդյո՞ք գործող հակամենաշնորհային կանոնակարգերը և դրանց հետ կապված տնտեսական վերլուծության գործիքները բավարար են թվային հարթակներին առնչվող տնտեսական հարաբերությունների խնդիրների ուսումնասիրության համար: Հեղինակների կարծիքով, ավանդական շուկաների տեսության առկա գործիքները դեռևս բավարար չեն կարգավորող մարմնի և ընկերությունների կողմից շուկայի սահմանները որոշելու համար[11]:

Ներկայումս աշխարհաքաղաքական խնդիրների լուծման համատեքստում այլ հեղինակներ քննարկել են «Հյուսիսային հոսք 2» կոնսորցիումի մասնակիցների նկատման Լեհաստանի հակամենաշնորհային մարմնի մեղադրանքի իրավացիությունը՝ կապված տնտեսական համակենտրոնացման գործարքի հետ: Հեղինակների պնդմամբ, «Հյուսիսային հոսք 2» կոնսորցիումը համատեղ գործելու պայմանագիր է, ոչ թե համատեղ ձեռնարկություն: Հետևաբար, կոնսորցիումը համատեղ ձեռնարկություն չէ[12]: Նրանք եզրակացրել են, որ «Գազպրոմի» նկատմամբ կայացրած որոշումը վկայում է, որ մրցակցային օրենսդրության կիրառումը ճյուղային շուկաների իրավական վեճերի լուծման ժամանակ արդիական է[13]

ՀՀ ՄՊՀ-ի գործունեության վերլուծության վերաբերյալ դրա ստեղծման օրից առ այսօր մեծ թվով հրապարակումներ են եղել: Մասնավորապես, մեր կողմից պետական կարգավորող մարմնի՝ Հանձնաժողովի գործունեության առաջին չորս տարիների վերաբերյալ ուսումնասիրություն է կատարվել, որում ներկայացվել է մրցակցության և մենաշնորհների տեսական ասպեկտները, շուկայի կարգավորման մեթոդական հիմքերը, առանձին ապրանքային

---

[8] Նույն տեղում, էջ 34:

[9] Նույն տեղում:

[10] Шаститко А., Маркова О., Старый друг лучше новых двух? *Подходы к исследованию рынков в условиях цифровой трансформации для применения антимонопольного законодательства,* Вопросы экономики, № 6 (2020), с.37.

[11] Նույն տեղում, էջ 54:

[12] (Авдашева С., Юсупова Г., 2021), էջ 135-136:

[13] Նույն տեղում, էջ 148:

շուկաներում մրցակցության վիճակը, շուկայական իշխանություն ունեցող սուբյեկտների չարաշահումները: Նա առաջարկել է մրցակցության և մենաշնորհների կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիներ[14]:

Մ.Միքայելյանն անդրադարձել է մրցակցային օրենսդրության և ՄՊՀ-ի գործունեության մի քանի բացթողումներին ու սխալներին: ՄՊՀ-ի 2022 թ. տարեկան գործունեության հաշվետվության մեջ ներառվել են տնտեսության հինգ ոլորտներին առնչվող ուսումնասիրություններ: Առաջին հայացքից թվում է, թե ապրանքային շուկաների վերլուծությունը և ոլորտային ուսումնասիրությունները նույնական բովանդակության գործողություններ են: Սակայն դրանց միջև էական տարբերություններ կան: Նախ՝ ոլորտն ավելի լայն հասկացություն է, քան շուկան: Ոլորտում կարող են մեկից ավելի շուկաներ գործել[15]: Հարցի պատասխանը տալու համար Հանձնաժողովը պարտավոր էր առաջնորդվել ապրանքային շուկայի սահմանների որոշման կարգով:

Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության որոշ հարցեր ու մասնագիտական սխալներ են ներկայացվել 2017 թվականի հոդվածներից մեկում: Հեղինակների կարծիքով, Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն, տարեկան գործունեության հաշվետվության մեջ պետք է կատարվի ապրանքային շուկաների վերլուծություն: Հիմք ընդունելով Օրենքի համապատասխան հոդվածները, նշվել է, որ ապրանքային շուկաների վերլուծություն կատարելու համար անհրաժեշտ է առնվազն, ըստ առանձին ապրանքային շուկաների՝ պարզել շուկայի սուբյեկտներին, դրանց իրացման ծավալները և շուկայի ընդհանուր ծավալը: Միայն դրանից հետո կարելի է գնահատել գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների առկայությունը և դրանց կողմից չարաշահում կատարելու հնարավորությունը: Նրանց կարծիքով՝ ապրանքային շուկան որոշելիս կարևոր է առանձնացնել ոչ միայն ապրանքի տեսակը, այլև գնային պարամետրը[16]: Ուսումնասիրելով, Հանձնաժողովի 2015 թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, եզրակացվել է, որ պետական մարմինը մասնագիտական սխալ է թույլ տվել նպարեղենը (հնդկաձավար, բրինձ, ոսպ, ոլոռ, մակարոնեղեն և այլն) մեկ ընդհանուր շուկայում ներառելով[17]:

Նույն հեղինակները անդրադարձել են բենզինի և դիզվառելիքի շուկաների վրա հարկային օրենսգրքի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությանը: Հանձնաժողովի գնահատմամբ բենզինի և դիզվառելիքի գների փոփոխությունը

---

[14] Միքայելյան Մ., Տնտեսական Մրցակցություն և մենաշնորհների պետական կարգավոր-ման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Նահապետ», 2005թ., գլուխ 5:

[15] Միքայելյան Մ., Պետական ինքնավար մարմինների գործունեության արդյունավետության բարելավման մի քանի հարց (մրցակցության պաշտպանության հանձնաժողովի օրինակով), Միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 74:

[16] Միքայելյան Մ., Միքայելյան Գ., ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2017, N2(650), էջ 231:

[17] Նույն տեղում, էջ 232:

պայմանավորված է միայն վերոհիշյալ օրենսգրքի ընդունմամբ և այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտները այդ դիրքը չեն չարաշահել: Համապատասխան հաշվարկներով ցույց է տրվել, որ բենզինի շուկայում 1լիտրի հաշվով տնտեսավարողը ավելի քան 16 դրամի գերշահույթ է ստացել, իսկ դիզվառելիքի շուկայում՝ 43 դրամ[18]:

Հեղինակների մի խումբ ուսումնասիրել է ցորենի միջազգային գները պայմանավորող գործոնները և դրանց ազդեցությունը ՀՀ-ում ցորենի և այլուրի շուկաների վրա: Նրանք ներկայացրել են ցորենի և ալյուրի ներմուծման ծավալները 2011-2019 թվականներին, դրանց միջին գներն ըստ արտահանող առանձին հիմնական երկրների, սրանց ինքնարժեքների առանձին տարրերի փոփոխությունները 2018-2020 թվականներին[19]:

Հեղինակների մեկ այլ խումբ անդրադարձել է թռչնամսի շուկայի զարգացման միտումներին աշխարհում և Հայաստանում (Թ.Մկրտչյան և ուրիշներ, 2021): Ներկայացվել է աշխարհում մսամթերքի որոշ տեսակների (ոչխարի, խոզի, տավարի և թռչնամսի) արտադրության ու սպառման ծավալները և աճի տեմպերը 1990-2020 թվականներին և դրանց տեսակարար կշիռները ըստ առանձին երկրների և երկրների խմբերի[20], ինչպես նաև մսամթերքի արտադրության և սպառման ծավալները, ինքնաբավության մակարդակը (2005-2020 թվականներին)[21]:

Դ.Հովհաննիսյանի մենագրությունը նվիրված է ՀՀ ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի առկա հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը: Առաջարկվում է իրականացնել մի քանի կարգավորում: Մասնավորապես, օրենքում ամրագրել պետական օժանդակության տրամադրման վերին սահման, ԵԱՏՄ-ում ավելացված արժեքից հարկը հավասարեցնել[22]:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար օգտագործվել են ուսումնասիրության առարկային առնչվող Հայաստանի և այլ երկրների վերաբերյալ գիտական հետազոտությունները, պաշտոնական վիճակագրական տվյալները, ՄՊՀ-ի տարեկան գործունեության հաշվետվությունները և առանձին շուկաների և ոլորտների վերաբերյալ ուսումնասիրությունները:

Հետազոտության ընթացքում, բացի ընդհանուր տնտեսագիտության ուսումնասիրության մեթոդներից, օգտագործվել են նաև ապրանքային

---

[18] Միքայելյան Մ., Միքայելյան Գ., Տնտեսական մրցակցության կարգավորման որոշ հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, N3(654), էջ 151-153:

[19] Մկրտչյան Թ. և ուրիշներ, Ցորենի միջազգային գների փոփոխությունը պայմանավորող գործոնները ու դրանց ազդեցությունը ՀՀ-ում ցորենի և այլուրի շուկաների վրա, Բանբեր ՀՊՏՀ, 2020 N 4, էջ 100:

[20] Մկրտչյան Թ. և ուրիշներ, Թռչնամսի շուկայի զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում, Բանբեր ՀՊՏՀ, 2021 N 4, 116-117 էջեր:

[21] Նույն տեղում , էջ 121-122

[22] Հովհաննիսյան Դ., Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, Եր. 2023, էջ 204:

շուկաների վերլուծության առանձնահատուկ մեթոդներ (ապրանքային շուկայի որոշման ապրանքատեսակային, աշխարհագրական սահմանների, շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածի որոշման, տնտեսական համակենտրոնացումների գնահատման և այլ մեթոդներ)։

Վերլուծություն: Ինչպես արդեն նշել ենք, հեղուկ գազը վաճառվում է գրեթե կրկնակի բարձր գնով (հուլիսի 2-րդ կեսից), քան այդ ապրանքի գնի կտրուկ բարձրացումն էր։ Հանձնաժողովը մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներ չի արձանագրել, քանի, որ, ըստ իր հաղորդագրության Հայաստան հեղուկ գազ ներմուծում են 170 ֆիրմա և դրանցից ամենախոշոր ներմուծողի բաժինը չի գերազանցում ընդհանուրի 7 %-ը[23]։

Օրենքի համաձայն ապրանքային շուկան որոշվում է սպառողների և ապրանքատերերի՝ ապրանքը ձեռքբերելու և իրացնելու հնարավորությամբ և նպատակահարմարությամբ (հոդված 3, մաս 1, կետ 4)։ Նախ, այստեղ խնդիրը (սպառողների դժգոհությունը) վերաբերում է հեղուկ գազի մանրածախ վաճառքի գնի բարձրացմանը։ Պարտադիր չէ , որ հեղուկ գազ ներմուծողը մանրածախ վաճառքի շուկայի մասնակից դառնա։ Հնարավոր է, որ հեղուկ գազը նա իր կարիքների համար է ներմուծել (օրինակ, խոշոր բեռնատար կամ ուղևորատար ֆիրմա)։ Երկրորդ, հնարավոր է, որ ներմուծողն այդ գազը (կամ դրա մի մասը) մեծածախ գնով է վաճառել։ Հետևաբար, Հանձնաժողովը պետք է պարզեր հեղուկ գազի մեծածախ շուկայում գերիշխող դիրք ունեցող առկա՞ է, և ի՞նչ գնով է այն իրացրել։ Երրորդ, Ապրանքային շուկաների որոշման կարգի[24] համաձայն, Հանձնաժողովը պարտավոր էր՝

- որոշել ուսումնասիրության ժամանակահատվածը (այն ժամանակահատվածը, որի ընթացքում հեղուկ գազի գինը կտրուկ բարձրացել է),
- պարզել շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, ծավալը և սուբյեկտների բաժինները շուկայում։

Հարց է առաջանում, հեղուկ գազի ուսումնասիրության արդյունքները հրապարակելիս արդյո՞ք Հանձնաժողովի եզրակացությունը բխում է Կարգի պահանջներին համապատասխան կատարված գործողություններից։

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ընդունվում են նիստում»։ Եթե այդ

---

[23] Հանձնաժողովի «Տեղեկատվական կենտրոն» բաժնի «Նորություններ» ենթաբաժին https://competition.am/hy/2025/07/31/%d5%b0%d5%a5%d5%b2%d5%b8%d6%82%d5%af-%d5%a3%d5%a1%d5%a6%d5%ab-%d5%b7%d5%b8%d6%82%d5%af%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4-%d5%b9%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a3%d5%a5%d6%80%d5%ab%d5%b7%d5%ad%d5%b8%d5%b2-%d5%a4/ (վերջին դիտումը՝ 03.12.2025)

[24] Ապրանքային շուկաների որոշման կարգ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թ. սեպտեմբերի 29-ի N 263-Ն նիստում

եզրակացությունը կոլեգիալ մարմնի որոշումով է ընդունվել, ապա ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը պետք է քննարկվեին Հանձնաժողովի նիստում: Մինչդեռ այդ մասին վկայող Հանձնաժողովի կայքէջում կամ ԶԼՄ-ների «նորություններ» կամ այլ բաժիններում չկա ոչ մի պաշտոնական հաղորդագրություն: Հանձնաժողովի հաղորդագրությունից տպավորություն է ստեղծվում, թե հեղուկ գազ ներմուծող տնտեսավարող սուբյեկտների այդ գազի ծավալները հաշվառվել են մեկ ապրանքային շուկայում: Այլ կերպ ասած՝ պետական մարմինը ճիշտ չի որոշել շուկայի ոչ միայն ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, այլև՝ ուսումնասիրության ժամանակահատվածը: Որքան լայն են վերցվել այդ սահմանները, այնքան փոքր կլինի այդ շուկայում տնտեսավարող սուբյեկտների բաժինը, հետևաբար՝ դրանց գերիշխող դիրք ունենալու հավանականությունը[25]:

Հանձնաժողովի գործունեության գրեթե քառորդ դարի ընթացքում նման սխալներ և անճշտություններ նկատվել են շատ ապրանքային շուկաներ վերլուծելիս: Հաճախ նկատվել են նաև «ապրանքային շուկա» և «ոլորտ» եզրույթների սխալ մեկնաբանություններ: Առաջին հայացքից թվում է, թե ապրանքային շուկաների վերլուծությունը և ոլորտային ուսումնասիրությունները նույնական բովանդակության գործողություններ են: Սակայն դրանց միջև էական տարբերություններ կան: Ոլորտն ավելի լայն հասկացություն է, քան շուկան: Ոլորտում կարող են մեկից ավելի շուկաներ գործել:

Նմանօրինակ սխալներ կան ոչ միայն Հանձնաժողովի ուսումնասիրություններում, այլև գիտական հետազոտություններում: Ընդ որում, դրանց զգալի մասում այդ սխալներն արտացոլված են հետազոտության վերնագրերում, ինչպես, օրինակ, «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում»[26], «ՀՀ-ում շինանյութի շուկայի ուսումնասիրություն (ամրանների շրջանառության ոլորտի օրինակով)»[27] «ՀՀ մսամթերքի շրջանառության ոլորտի մրցակցային միջավայրի վերլուծությունը»[28]) և այլ հետազոտություններում:

Հաձնաժողովի մասնագիտական կարողությունների զարգացմանը էապես խոչընդոտել են աշխատակազմի հաճախակի փոփոխությունները: Միայն վերջին տասներկու տարիներին պետական մարմնի աշխատակազմը փոխվել է գրեթե 80 %-ով, իսկ մասնագետները՝ ավելի քան 90 %-ով (Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր նախագահ փոձել է աշխատակազմում յուրայիններին «տեղավորել»՝ անտեսելով կադրերի արհեստավարժության մակարդակը):

Մյուս պատճառը Հանձնաժողովի ձևավորման մեխանիզմն է: Օրենքի առաջին տարբերակում (մինչև 2018 թվականի մարտի 23-ը) դրա անդամների

---

[25] Авдашева С., Шаститко А., 2011, նույն տեղում, էջ 124:

[26] Հովհաննիսյան Դ., 2023, 204 էջ:

[27] Կարապետյան Ն.և ուրիշներ, 2025, Եր. «Ամբերդ» մատենաշար 78, 118 էջ:

[28] Մելքումյան Զ. և ուրիշներ, 2016, Ֆինանսներ և էկոնոմիկա, թիվ 7-8, 133-137 էջեր:

նկատմամբ չի եղել արհեստավարժության որևէ պահանջ (բացառությամբ՝ բարձրագույն կրթության ունենալը)։ Միակ պահանջն այն է, թե ովքե՞ր չեն կարող լինել Հանձնաժողովի անդամ։ Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջներում օրենսդիրը արհեստավարժության պահանջներ չի ամրագրել նաև հետագա տարիներին Օրենքում կատարված փոփոխություններում։

Միաժամանակ, սահմանափակվել է Հանձնաժողովի անդամի տարիքային շեմը՝ մինչև 65 տարին լրանալը[29]։ Դրանով ոչ միայն կայացած մասնագետների ճանապարհն են փակում, այլև նվազեցնում են Հանձնաժողովի անդամների հմտություններն ու կարողությունները։ Հանձնաժողովի և դրա աշխատակազմի զարգացմանը զգալիորեն կնպաստի հանձնաժողովի բոլոր անդամների նշանակման այնպիսի կառուցակարգը, որի դեպքում Հանձնաժողովի անդամի նշանակումը կախված չլինի նշանակողից (օրինակ, նշանակվի արհեստավարժների անկախ, թափանցիկ կադրային բանկում հերթական համարի մասնագետը)։

Եզրակացություններ։ Սույն հետազոտությունը կատարելիս հեղինակները հանգել են հետևյալ եզրահանգմանը.

1. Եվրասիական տարածաշրջանում նախկին խորհրդային հանրապետությունների մրցակցությունը պաշտպանող որոշ պետական մարմիններ առանձին դեպքերում թույլ են տվել մեթոդական բնույթի նույնանման սխալներ։ Մասնավորապես, սխալ են որոշել ապրանքային շուկայի ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմանները և ուսումնասիրության ժամանակահատվածը։

2. Նույն սխալի պատճառով Հանձնաժողովը հեղուկ գազի շուկայում «չի հայտնաբերել» գերիշխող դիրք ունեցող սուբյեկտ։ Առնվազն հաշվարկներով չի հիմնավորել, որ այդ շուկայում հեղուկ գազի մենաշնորհ բարձր գին չի սահմանվել։

3. Աշխատակազմի մասնագետ կադրերի արհեստավարժության պակասը հիմնականում պայմանավորված է այդ կադրերի հոսունությամբ։

4. Արհեստավարժության պակասը վերաբերում է ոչ միայն աշխատակազմի մասնագետ կադրերին, այլև՝ Հանձնաժողովի անդամներին։ Դրա պատճառը Հանձնաժողովի անդամների ընտրության ժամանակ արհեստավարժության պահանջ չներկայացնելն է։

5. Օրենսդրական բաց է Հանձնաժողովի անդամի տարիքային շեմի սահմանափակումը (մինչև 65 տարին լրանալը)։ Դրանով ոչ միայն կայացած մասնագետներն են համակարգից դուրս մնում, այլև նվազեցվում են Հանձնաժողովի հմտություններն ու կարողությունները։

---

[29] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (հոդված 30, մաս 5), 30.03.2021, ՀՕ-92-Ն

Առաջարկություններ՝

1. Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է դրա անդամների ընտրության հիմքում դնել արհեստավարժության, անկախության և թափանցիկության սկզբունքները։

2. Այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել արհեստավարժության հայտանիշներով թափանցիկ և անկախ կադրային բանկ, որում թեկնածուները նախապես սահմանված չափանիշներին համապատասխան ստանում են իրենց հաջորդական համարը՝ հերթականությամբ փոխարինելով պաշտոնավարման ժամկետը լրացրած անդամներին։

3. Օրենքից հանել 30-րդ հոդվածի 5-րդ մասը (Հանձնաժողովի անդամի տարիքային շեմի սահմանափակումը)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.11.2000, ստորագրվել է 5 դեկտեմբերի 2000թ., ՀՕ-112)։
2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (հոդված 30, մաս 5), 30.03.2021, ՀՕ-92-Ն:
3. Ապրանքային շուկաների որոշման կարգ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թ. սեպտեմբերի 29-ի N 263-Ն նիստում։
4. Աղաջանյան Գ., Պարենային շուկայի կայուն զարգացման կառուցակարգերը, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2016, թիվ 11-12, 136-139 էջեր։
5. Կարապետյան, Ն., Մովսիսյան, Մ., Մելքումյան, Զ., Այվազյան, Ա., Միրումյան, Ա., Պետրոսյան, Ն., Տոնոյան Ք., ՀՀ-ում շինանյութի շուկայի ուսումնասիրություն (ամրանների շրջանառության ոլորտի օրինակով), Եր. «Ամբերդ» մատենաշար 78, 2025, 118 էջ։
6. Հովհաննիսյան, Դ., Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, Եր. 2023թ., 200 էջ։
7. Մելքումյան, Զ., ՀՀ մսամթերքի շրջանառության ոլորտի մրցակցային միջավայրի վերլուծությունը, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2016, թիվ 7-8, 133-137 էջեր։
8. Միքայելյան Մ., Միքայելյան Գ., ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2017, N2(650), էջ 229-234։
9. Միքայելյան Մ., Միքայելյան Գ., Տնտեսական մրցակցության կարգավորման հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, N3 (654), 148-156:

10. Միքայելյան, Մ., Պետական ինքնավար մարմինների գործունեության արդյունավետության բարելավման մի քանի հարց (մրցակցության պաշտպանության հանձնաժողովի օրինակով), Միջազգային գիտաժողովի նյութեր, 2024թ, 73-79 էջեր: DOI 10.55490/18290167-2024.sp-73
11. Միքայելյան, Մ., Տնտեսական Մրցակցություն և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005թ., 253 էջ:
12. Մկրտչյան, Թ., Համբարձումյան, Է., Ղարագյոզյան, Մ., Սարգսյան, Հ., Թռչնամսի շուկայի զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում, Բանբեր ՀՊՏՀ, 2021 N 4, 115-139 էջեր:
13. Մկրտչյան, Թ., Ղարագյոզյան, Մ., Պողոսյան, Վ., Ցորենի միջազգային գների փոփոխությունը պայմանավորող գործոնները ու դրանց ազդեցությունը ՀՀ-ում ցորենի և այլուրի շուկաների վրա, Բանբեր ՀՊՏՀ, 2020 N 4, 98-120
14. Авдашева, С., Шаститко, А., Экономика уголовных санкций за нарушение антимонопольного законодательства, Вопросы экономики, № 1 , 2010 с. 129-142.
15. Авдашева С., Шаститко А., Экономический анализ в делах о нарушении закона «о защите конкуренции» Вопросы экономики, № 2 , 2011 с. 122-139.
16. Авдашева С., Юсупова Г., 2021, Экономический анализ границ фирмы и ограничений конкуренции: случай консорциума «Северный поток-2», Вопросы экономики, № 2 , 2011 с. 134-151. https: /doi.org/10.32609/0042-8736-2021-10-134-151
17. Турдыкулович, А., Развитие и защита конкуренции возможны только при активном участии экспертов, Конкуренция и антимонопольное регулирование в евразийском экономическом союзе, № 1 , 2021с. 32-37.
18. Шаститко, А., «Сопоставимые рынки» как инструмент антимонопольной политики, Вопросы экономики, № 5 , 2010 с. 96-109.
19. Шаститко А., Маркова О., Старый друг лучше новых двух? Подходы к исследованию рынков в условиях цифровой трансформации для применения антимонопольного законодательства, Вопросы экономики, № 6 (2020), с.37-55. https://doi.org/10.32609/0042-8736-2020-6-37-55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԳԱԲՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Համառոտագիր

Շուտով կբոլորի ՀՀ-ում մրցակցության պաշտպանության պետական մարմնի (այսուհետև՝ Հանձնաժողով) գործունեության քառորդ դարը: Անցնող

տարիներին Հանձնաժողովին հաջողվել է բացահայտել մրցակցության պաշտպանությանը վերաբերող բազմաթիվ հակաօրինական գործողություններ։

Դրական գործունեության հետ միասին զգալի են նաև Հանձնաժողովի թերացումները և մասնագիտական սխալներն ու անճշտությունները։ Ընդ որում, դրանց որոշ մասը կրկնվում է։ Այդպիսի սխալներ առկա են նաև եվրասիական տարածաշրջանում նախկին խորհրդային հանրապետությունների մրցակցությունը պաշտպանող որոշ պետական մարմինների գործունեության ընթացքում։ Մասնավորապես, մրցակցության պաշտպանության պետական մարմինները սխալ են որոշել ապրանքային շուկայի ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմանները, ինչպես նաև՝ խախտում թույլ տալու ուսումնասիրության ժամանակահատվածը։ Նույն սխալի պատճառով Հանձնաժողովը հեղուկ գազի շուկայում «չի հայտնաբերել» գերիշխող դիրք ունեցող սուբյեկտ։ Առնվազն հաշվարկներով չի հիմնավորել, որ այդ շուկայում հեղուկ գազի մենաշնորհ բարձր գին չի սահմանվել։ Աշխատակազմի մասնագետ կադրերի արհեստավարժության պակասը հիմնականում պայմանավորված է այդ կադրերի հաճախակի փոփոխություններով, ինչպես նաև՝ օրենսդրական բացով (Հանձնաժողովի անդամների նկատմամբ արհեստավարժության պահանջի բացակայությունը և տարիքային շեմի առկայությունը)։

Հետազոտության արդյունքներն ամփոփվել են հետևյալ առաջարկություններով.

1. Հանձնաժողովի գործունեությունում մասնագիտական սխալների կրկնությունը բացառելու համար անհրաժեշտ է այդ պետական մարմնի անդամների ընտրության հիմքում դնել արհեստավարժության, անկախության և թափանցիկության սկզբունքները։ Միաժամանակ, մասնագետ կադրերի նշանակումն ու ազատումը պետք է տեղի ունենա Հանձնաժողովի արձանագրային որոշմամբ։

2. Հանձնաժողովի անդամների նշանակումը պետք է կատարվի արհեստավարժության սկզբունքով նախապես ձևավորված կադրային բանկից։ Այդ բանկում Հանձնաժողովի անդամի թեկնածուները արհեստավարժության սահմանված չափանիշներին համապատասխան ստանում են իրենց հաջորդական համարը՝ հերթականությամբ փոխարինելով նշանակման ժամկետը լրացրած անդամներին։

3. Հանձնաժողովի արհեստավարժ գործունեության ժառանգականությունն ապահովելու, ինչպես նաև դրա անդամների կարողություններն ու հմտությունները պահպանելու ու զարգացնելու համար հարկավոր է Հանձնաժողովի անդամի տարիքային շեմի սահմանափակումը Օրենքից հանել (հոդված 30, մաս 5)։

Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, հանձնաժողով, ապրանքային շուկա, ապրանքատեսակային սահման, աշխարհագրական սահման, ուսումնասիրության ժամանակահատված, գերիշխող դիրք։

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ КОНКУРЕНЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МИКАЕЛ МИКАЕЛЯН
ГАБРИЕЛ МИКАЕЛЯН

Аннотация

Государственный орган по защите конкуренции (далее – Комиссия) в Республике Армения вскоре отметит четверть века своей деятельности. За прошедшие годы Комиссии удалось раскрыть множество незаконных действий, связанных с защитой конкуренции.

Наряду с позитивной деятельностью, заметны и недостатки, профессиональные ошибки и неточности в работе Комиссии. Причём некоторые из них повторяются..

Подобные ошибки встречаются и в деятельности некоторых государственных органов по защите конкуренции в бывших советских республиках Евразийского региона. В частности, государственные органы по защите конкуренции неверно определяли товарные и географические границы товарного рынка, а также сроки расследования нарушений.

Из-за той же ошибки Комиссия «не обнаружила» субъекта, занимающего доминирующее положение на рынке сжиженного газа. По крайней мере, она не подтвердила расчетами, что на этом рынке не была установлена монопольно высокая цена на сжиженный газ.

Недостаток профессионализма специалистов в основном обусловлен частой сменой кадров, а также законодательным пробелом (отсутствие требования к профессионализму и наличие возрастного ограничения для членов Комиссии).

Результаты исследования обобщены в следующих рекомендациях:

1. Во избежание повторения профессиональных ошибок в деятельности Комиссии необходимо основывать отбор членов данного государственного органа на принципах профессионализма, независимости и прозрачности. При этом назначение на должность и освобождение от должности специалистов должно осуществляться протокольным решением Комиссии.

2. Назначение членов Комиссии осуществляется из ранее сформированного резерва кадров на основе принципа профессионализма. В этом резерве кандидаты в члены Комиссии получают порядковые номера в соответствии с установленными стандартами профессионализма, заменяя поочередно членов, завершивших срок своих полномочий.

3. В целях обеспечения преемственности профессиональной деятельности Комиссии, а также сохранения и развития способностей и навыков ее членов необходимо исключить из Закона возрастной ценз для члена Комиссии (статья 30, часть 5).

Ключевые слова: экономическая конкуренция, комиссия, товарный рынок, продуктовая граница рынка, географическая граница, период исследования, доминирующее положение.

KEY ISSUES OF COMPETITION PROTECTION IN ARMENIA

MIKAYEL MIKAELIAN
GABRIEL MIKAELIAN

Abstract

Soon, the state authority for the protection of competition in the Republic of Armenia (hereinafter referred to as the Commission) will mark the twenty-fifth anniversary of its establishment. Over the years, the Commission has succeeded in uncovering numerous unlawful practices related to the protection of competition. Alongside its positive achievements, however, significant shortcomings, professional errors, and inaccuracies in the Commission's activities are also evident, some of which recur over time. Similar errors have been observed in the practices of competition authorities in several post-Soviet countries within the Eurasian region. In particular, competition authorities have incorrectly defined the product and geographic boundaries of relevant markets, as well as the time period used for investigating alleged infringements.

As a result of such methodological errors, the Commission failed to identify a dominant undertaking in the liquefied petroleum gas (LPG) market and did not substantiate, at least through proper calculations, that monopoly pricing was absent in this market. The insufficient professional capacity of the Commission's staff is largely attributable to frequent personnel turnover, as well as to legislative gaps, including the absence of professional qualification requirements for Commission members and the existence of an age threshold. The findings of the study lead to the following recommendations:

- To prevent the recurrence of professional errors in the Commission's activities, the selection of its members should be based on the principles of professionalism, independence, and transparency.
- The appointment of Commission members should be conducted on the basis of professionalism from a pre-established кадров reserve (talent pool).
- In order to ensure continuity in the Commission's professional activities and to preserve and further develop the competencies and skills of its members, the age limit for Commission members should be removed from the Law (Article 30, Part 5).

Keywords: economic competition, commission, product market, product boundaries, geographic boundaries, period of investigation, dominant position